ՀՈԴՎԱԾԻ ՀԵՂԻՆԱԿԻՆ

Հոդվածները ներկայացվում են բովանդակային հետևյալ կառուցվածքով՝ ներածություն, տեսամեթոդական հիմքեր, ուսումնասիրության մեթոդներ, ստացված արդյունքներ, եզրակացություն և գրականություն:

ՀՈԴՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՁԵՎԱՉԱՓԸ

Հոդվածն ընդունվում է էլեկտրոնային տարբերակով՝ katchar@isec.am հասցեով:

Տարածքը՝ *վերևից*՝ 2 սմ, *ներքևից*՝ 2 սմ, *ձախից*՝ 2 սմ, *աջից*՝ 2 սմ:

Տառատեսակը՝ հայերենի համար՝ «GHEA Grapalat», անգլերենի և ռուսերենի համար՝ «Times New Roman»:

Տողերի միջև հեռավորությունը՝ 1,5:

Տառաչափը՝ 12:

Հոդվածի առաջին էջը պետք է ներառի՝

- հոդվածի վերնագիր (ցանկալի է, որ վերնագիրը պարունակի առավելագույնը 10 բառ).
- Ամփոփում՝ անգլերենով՝ 1 էջ
- Keywords and phrases (Do not exceed 10 words)
- Ամփոփում՝ հայերենով՝ 1 էջ
- Բանալի բառեր և բառակապակցություններ (Չգերազանցի 10 բառը)
- Ամփոփում՝ ռուսերենով՝ 1 էջ
- Ключевые слова и фразы (Не превышать 10 слов)

Սկզբում գրվում է հոդվածի վերնագիրը, այնուհետև՝ հեղինակի/հեղինակների անուն-ազգանունը, զբաղեցրած պաշտոնը, աշխատավայրը, գիտական աստիճանը և կոչումը: Այնուհետև անգլերենով ներկայացվում են հոդվածի ամփոփումը, բանալի բառերը և բառակապակցությունները, հետո՝ ամբողջական հոդվածը: Հոդվածի ավարտին հայերեն և ռուսերեն լեզուներով ներկայացվում են վերնագրերը, ամփոփումները և բանալի բառերն ու բառակապակցությունները: